

Մենայիւ ամին տեսակ պատահականութիւնից եւ կնճռոտութիւնից եւ ներկայումս էլ նոյն համեմունքի վրայ կնք: Մենք տածում ենք քաղցր յոյս, որ նայ հասարակութիւնը՝ իր կեանքի ներկայ խոյնրդուտը շրջանին կը գիտակցէ վերջապէս լատաղոյն պարքեր. հասարակութեան գերագանց պաշտօնականութիւնը իր կեանքի երջանկութեան համար եւ կը յոգայ ապահովելու նրանց գոյութիւնը, որով կ'ապահովի եւ իր գոյութիւնը, այս խօսքի քնդարձակ մտքով:

“Աղբիւր-Ցարագի, հասարակութիւնները ապահովելու իամար մի յատուկ անձեռնմխելի ֆունդ զուիւ բերելուն ըսական էր մեր նախնային նրեստմանից մի երկուսի ցանկութիւնը ուր մնաց թէ նայ հասարակութեան ամբողջութեան մասնակցութիւնը:

Մենք մեր կողմից յայտնելով մեր իամարանքը եւ յարգանքը յորելեարին, որը կարողացաւ յաղթել քառորդ դար ամին տեսակ դժուարութիւններ եւ այդպիսով զարդարել իր իամիստ գործունէութիւնը անթառամ փառապատկանիւրով. ընդ մին տածում ենք քաղցր յոյս, որ նայ հասարակութիւնը կը հասկանայ իր պարտականութիւնը եւ դրական աջակցութեամբ ու նրախոյսներով միջոց կու տայ “Աղբիւր, ի խմբագիր-հրատարակողին եւ ապագայի համար շարունակել իր սպասարկութիւնը՝ յօգուտ հասարակաց բարիքի, յանուն հանրային վսեմ՝ գործի:

ԹԻՖԼԻՍ,

ԳԵՐ. ԹԵՄՈՒՄԱՅԵԱՆ

1908 թ. Դեկտ. 21-ի:



ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ

ԳԻՐԹԵՐ ԳՅՈՒ ԳՅՈՒՅՈՒՆԵՐԻՔԵՐ ԵՒ ՀՈՅՈՒՆ
ՀԻՆ ԳՅՈՒՅՈՒՆԵՐԻՔԵՐ ԻՐԱՆԻՔԵՐ

ՀԱՅՈՒՆԵՐ ԵՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՅԻՍԿԱՆ ԴՐՐ. ԴՈՒՆԵՐ

ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ

ԸՆԴՈՒՆԵՐ ԻՐԱՆԻՔԵՐ

Ս.

ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ

(ՀԵՐԱՆԻՔԵՐ)

III.

ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵՐ

Հայտնական ամենահին ձեւերից մէկը, որով կատարւում էր ամուսնութիւնը, առեւանգումն էր: Առեւանգումը կայանումն է նրանում, որ մի երիտասարդ իւր ընկերների հետ յարձակում է այն ընտանիքի վրայ, որին պատկանում է հաւանած կամ սիրած աղջիկը եւ, փախցնելով վերջինի, զուգահորում է սրա հետ: Առեւանգման մէջ աղջիկը կարող էր սկզբից խօսք կա. պած լինել եւ համաձայնութիւն կայացրած այդ երիտասարդի հետ փախուստի համար, որ անտարակոյս դիւրացնում է առեւանգողների գործը եւ կամ թէ կարող էր այդ փախուստը տեղի ունենալ աղջկայ անգիտութեամբ: Առեւանգումն, ինչպէս ապացուցւում է ժողովրդների իրաւաբանական կացի պատմա-համեմատական ուսումնասիրութեամբ, գոյութիւն է ունեցել եւ այժմ էլ գոյութիւն ունի այն հասարակութիւնների մէջ, որտեղ սոցիալ-կուլտուրական յարաբերութիւնները կանգնած են տակաւին ստորաստիճանների վրայ եւ որտեղ հասարակական տեսանկան կազմը դեռ եւս իսպառ գութը չի եկել նա հասկանալանցեղական շրջանի պայմաններից:

Հայոց մէջ էլ գոյութիւն էր ունեցել առեւանգումն այդքն շատ հին պատմական ժամանակներում, ինչպէս եղբակցանում ենք եղած փաստերից: Այդ առեւանգման հետեւողներն ու մնացորդները դեռ պահպանուել են նոյն իսկ մեր օրերում հասարակաց ձեւերի մէջ, որտեղ սիմբոլիական ձեւերով արտայայտւում է դա: Այնքան է, որ Հայոց պատմութեան միջին դարերում եւս ծաղկած գրութեան մէջ կը լինէր ամուսնութեան այդ տեսակ եղանակը: Դա հաս-

տատուում է աշխարհային կանոններին, որոնք յօ-
րինում են եղել մեր եկեղեցական ժողովնե-
րում: Միխիթար Գօշը էլ իւր Դատաստանագրքի
մէջ մտցրել է երեք հատ կանոն ընդդէմ ա-
ռեւանգութեան:

Գլխաւոր օրէնքը, որ բերում է Միխիթար
Գօշը իւր Դատաստանագրքի Ղ.Ձ. յօդուածով
(I մասի), ամբողջովին գրեթէ վերցրած է Շա-
հապիւմանի եկեղեցական ժողովի (447 թ.) կա-
նոններից: Այդ յօդուածից, որ բառական երկայն
է, տարբարութեամբ կարելի է հետեւեալ հիմ-
նական կէտերը հանել:

Ի հարկէ առեւանգումն, որպէս մի հիմ-
նարկութիւն, որ հակառակ է եկեղեցական ու
ճշմարիտ կրօնական ոգուն անպայման արգել-
ւում է: Առեւանգուած աղջիկը յետ պէտք է
խլուի ու վերագարձուի իւր ծնողներին: Առեւ-
անգողն աղկալ ծնողներին՝ փոխանակ անար-
գանայն, պէտք է տուգանք տայ, եթէ ապա-
ռէ 120¹⁾ դրամ եւ եթէ ընտան 600 դրամ: Ոչ
միայն առեւանգողն, այլ եւ՝ որք հորս երթեալ
իցն եւ օգնականք սուտ փեսային, նմանապէս
տուգանք են ենթարկուում, մարգագլուխ 100
դրամ. այս տուգանքի կէտը յատկաւրում է
եկեղեցուն եւ կէտը կարօտեալներին: Եթէ ա-
ռեւանգողն խախտել է աղկալ կուսութիւնն՝ առ-
անց պսակ դնելոյ, պարտական է՝ բացի վե-
րոյիցեալ տուգանքից՝ ենթարկել նաեւ 100 դրամ
յօդուած յընկէս 3 տարւայ: Երբ որեւէ երեք
պսակած լինի փախցրած աղջկանն իւր առեւան-
գողի հետ առանց աղկալ ծնողների կանխակալ
համաձայնութեան, նա զրկուում է քահանայա-
կան կոչումից եւ 100 դրամ՝ տուգանք է պար-
տաւոր վճարելու յօգուտ կարօտեալների. հե-
տեւապէս այդ պսակը անվանւի է համարում:
Եթէ՝ «յետ այսր խառնութեան ու տուգանքի
ալ չլին յօտարակամ՝ հաւանութեամբ ցանկա-
նայ ամուսնանալ առեւանգողի հետ եւ նրա
ծնողները համաձայն են արան, պէս ժամանակ
թոյլատրուում է պսակը. բայց այս դէպքումն էլ,
եթէ աղկալ կուսութիւնը նախ քան պսակա-
գրութիւնն չի խախտուել առեւանգողի կողմից,
պսակը պէտք է կատարել ոչ թէ՛ օրհնութեամբ,
այլ՝ իբրեւ երկակնն ուս տեսնող յիշող գիցեն
ի գլուխ նոցա, պսիւնքն երկրորդ ամուսնու-
թեան կանոնով ու կարգով. իսկ եթէ անար-
գուած չէ աղկալ կուսութիւնն, այն ժամանակ
«ըստ օրինի սրհնեալի»:

Այս Ղ.Ձ. յօդուածին մեծ նշանակութիւն
է տալիս նոյն ինքն Միխիթար Գօշը, քանի որ
Դատաստանագրքի մէջ կան նաեւ երկու այլ
յօդուածներ միեւնոյն հարցի վերաբերմամբ:
Միխիթար Գօշը առաջարկում է դատաւորներին
ու եպիսկոպոսներին ուշադրութեան արժեք այս
յօդուածը եւ ըստ այնմ էլ վարուել խիստ հե-
տեւողութեամբ: Այլապէս չէր էլ կորող լինել,
քանի որ այդ յօդուածը խմբագրուել է Հայե-
րից ու հայկական մի ժողովում, միշտեւ միա-
ցեալ երկու յօդուածները վերցուած են օտար
աղբիւրներից ու մոծուած նոյն Դատաստանա-
գրքի մէջ, ընայած իրենց փոքրիկ տարբերու-
թեանն: ԼԳ. (I մաս) յօդուածի մէջ, որ վեր-
ցրած է՝ «Հարցն հետեւողաց, ժե կանոնից եւ
խմբագրուած է աւելի մեղմ ոգով, թողլ է
տրուում ըստ իրենց կամքի ամուսնանալ առեւ-
անգողին եւ փախցրած աղջկան, եթէ դա հնա-
րաւոր է, հակառակ դէպքում ենթարկուում են
ապաշխարութեան: Իսկ երբ առեւանգուածից
ծնւի որդի, եւ աղջիկը (առեւանգը) ու սրա
ծնողները չկամենան ունենալ այդ որդուն, վեր-
ջինս ոչ մի միաս չպիտի կրէ՝ «ի չարագաղան
հոգւոյն»: Դատաստանագիրքը ի նկատի է առ-
նում նաեւ նշանածներին, այսինքն այն աղջիկ-
ներին, որոնք արդէն փեսացուներ ունին եւ խօսք
են տուած ամուսնանալու, բայց անապաւելի ա-
ռեւանգուում են օտարների կողմից: Այսպիսի
դէպքում առեւանգուած աղջկան անպայման
պէտք է յետ դարձնեն վերստին իւր նշանածին,
նոյն իսկ բուն կերպով, եթէ առեւանգողի կող-
մից դիմագրութիւն լինի (I մաս, գլ. ԵԱ):
Եթէ փախցրած նշանուած աղջիկը նոյն իսկ պսա-
կուած լինի իր յափշտակողի հետ, նմանապէս
պէտ է յետ դրնուի առեւանգողից, ընդհանրա-
պէս այս վերջին երկու յօդուածները մութ եւ
անորոշ են խմբագրուած եւ բացի այդ, շեշտում
են, որ առեւանգման վերաբերեալ պատիժները
պիտի լինին համաձայն եկեղեցական կանոննե-
րին, որոնց մէջ Միխիթար Գօշը երեւի ընդու-
նում է Շահապիւմանի Է կանոնը, այսինքն իւր
Դատաստանագրքի արդէն մեզ ծանօթ Ղ.Ձ. յօ-
դուածը:

Առեւանգմանը պատմական զարգացմամբ
ամուսնութեան ձեւերի մէջ յաջորդում է գնումն
որ նոյնպէս շատ հետաատութիւն է: Փախ-
ցրած աղջկայ ընտանիքն անտարակոյս այգպիսի
յափշտակութեան դէպքում հանգիստ չէր կա-
նող միայն, այլ շատ անգամ զենքը ձեռքին
կուռի էր դուրս գալիս առեւանգողների դէմ եւ

ամեն կերպ աշխատում յետ վերցնել փախցրած աղբիւր: Ժամանակի ընթացքում, մանաւանդ, եթէ հակառակորդներն հաւատացած չէին կռուի բարեխաղող հետեւանքներին, որեւէ համաձայնութեան էին գալիս եւ մի կողմը, փախցրած աղբկայ համար, իրեն հասցրած փնտի հատուցումն, վճարում էր որեւէ գումար՝ փրկանք: Թեոագայում առեւանգումը որոյրողին ոչնչանում է եւ դրա փոխարէն ասպարէզ է գալիս միմիայն որոշ գումարի վճարումն հայրնացուի համար, մի խօսքով՝ կնոջ գնումն: Սակայն վերջին երեւոյթն էլ ժամանակի ընթացքում կուլտուրական ազգերի մէջ վերացւում է ասպարիզից եւ, եթէ մնում է, այն էլ միայն հետքեր, որոնք յիշեցնում են նախկին, հին ժամանակներում երբեմն գոյութիւն ունեցող գնման սովորութիւնը: Անշուշտ հայերի մէջ էլ գոյութիւն էր ունեւ կնոջ գնումն, ինչպէս գիտանք մի քանի պատմական փաստերից՝ եւ գոյութիւն ունի տակաւին մեր օրերը թէեւ մի փոքր վերափոխուած եղանակով, մի քանի խուլ գաւառներում, ուր ժամանակակից քաղաքակրթութիւնը դեռ իւր ոտքը ներս չի դրել¹:

Դատաստանագրքից երեւում է, որ գնումն այն մտքով, ինչպէս դա գոյութիւն ունի մահ-մետականների մէջ «մահը» եւ «առ հուով-մեացին», որ «այս կողմ», մեզ մօտ իւր գոյութիւն չի ունեցել, գոնէ Մխիթար Գօշի կարծիքով: Սակայն դրա փոխարէն Մխիթար Գօշը առաջ է բերում այն փաստը, թէ ամուսին թէեւ չի հատուցանում կնոջ համար որոշ գին, բայց տալիս է զանազան իրեր, ընծաներ, որ «երեսոյ Գեորգ անուն կոչեն» (I Գ., գլ. 2815): Դա ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մի մնացորդ վաղուց ի վեր գոյութիւն ունեցող սովորութեան, այն է կնոջ գնման. դա ժամանակների ընթացքում զարգացած մի նոր ծէս է, որ միայն յիշեցնում է այդ հին գործողութիւնն եւ սեբունգէ սերունդ անցնելով այլափոխուել է ու դարձել լոկ մի արտաքին ձեւակաւութիւն: Երբ ամուսնութեան կարգը անցաւ եկեղեցական դասի իրաւասութեանը, այն ժամանակ եկեղեցին սրբազործեց այն բոլոր ծէսերն ու

սովորութիւնները, որոնք դարերի ընթացքում արմատացել էին ժողովրդի զանազան խաւերում, Ամուսնութեան կանխօրէն անհրաժեշտ ծէսերից մէկն էլ նշանագրութիւնն է, որ նմանապէս սրբազործուած է եկեղեցու կողմից: Նշանագրութիւնը՝ դա նախկին գրաւականն է, առհաւատեան, «բէհը», որ տուում է հարսնացուի համար եւ այդպիսով կնքում է ապագայ ամուսնութեան դաշինքը: Դատաստանագրքի մէջ ամուսնութեան զուգման այս նշանակալից սովորութեանը ոչ մի առանձին յօդուած չէ յատկացուած: Մանաւանդ սա զարմանալի է, քանի որ նշանագրութիւնն մինչեւ օրս մեր ժողովրդի մէջ աւելի նշանաւոր եւ լուրջ քայլ է համարւում ու աւելի խորհրդաւոր, քան պատկազրութիւնը: Նոյն իսկ հայոց եկեղեցին էլ, եթէ ոչ աւելի մեծ նշանակութիւն է տալիս, գոնէ հաւասար տեղ է նուիրում նշանագրութեանը պատկազրութեան հետ միասին: Սակայն Դատաստանագրքի հետեւեալ խօսքերը՝ «որք միանգամ խօսեալ աղկուքն են եւ զուգեալ գտանիցն», ... (I Գ., գլ. 2815) մեզ կողմնակի կերպով ենթադրել են տալիս, որ նշանագրութիւնն երկու մասերից էր բաղկացած՝ խօսեալ եւ զուգեալ յատուկ ծէսերից, այսինքն աղկելը, իսկապէս աղկեալ ծնողները, սկզբում տալիս են միմիայն խօսք տղային ծնողներին, թէ համաձայն են իրենց դուստրը տալ նոցա հարսնութեան, եւ ապա որոշ միջոցից յետոյ տեղի էր ունենում իսկական նշանագրութիւն վկանների ներկայութեամբ ու քահանայի օրհնութեամբ, որով մի տեսակ դաշինք էր կնքւում. երեւի սրան է վերապահում Մխիթար Գօշը՝ «զուգեալ, բառը: Այսօր իսկ մեր հասարակ ժողովրդի մէջ նոյն սովորութիւնը կայ, որ նշանագրութիւնն երկու վերջնեալ գործողութիւնների նման ձեւերով է կատարւում: Բայց Մխիթար Գօշը, ինչպէս երեւում է, այդ ձեւերին միատեսակ նշանակութիւն է տալիս, որովհետեւ մի փոքր յետոյ (նոյն Գլ. 2815) ասում է. «զուգեալն եւ զխօսեալն մի համարի»:

Դրանք այլ հետաքրքիր կէտի, թէ ինչ պայմաններում կարող է տեղի ունենալ ամուսնութեան զուգումն ըստ Մխիթար Գօշի:

Նախ եւ առաջ վերջնեալ համաձայնեալ հարցը, որ ամենակարեւոր պայմանն է ամուսնական կեանքի ընդունակութեան համար: Դատաստանագրքին ուշագրութեան է առել այդ հարցը, բայց տարօրինակ ձեւով: Ամուսնութեան առաջին պայմանն է, որ այրն պէտք է

¹ Հռոմէական կայսր Գուստինիանոսի XXI Novella-ն, De Armeniis, ut et illi per omnia Romanorum leges aequantur.

² Գնման եւ առեւանգման մասին տ. երկ մանրամասն տես մի պատմ. «Առեւանգման եւ գնման ամուսնութիւն», Արեւիկայի հանգիստ, Կիւր XII, եր. 40—43, Թիֆլիս, 1905 թ.:

երեց լինի, իսկ կնիւը կրտսեր «որպէս 'ի ստեղծմանն ցուցաւ նախատեսողին» (I Թ., գլ. Ե)։ Սակայն Դատաստանագիրքը չի որոշում, թէ ինչ հաստատում կամ մտաւորապէս ինչ տարբերում կարելի է ամուսնացուներին հասունացած համարել եւ ուրեմն թող տալ պատկուելու։ Գորտ փոխարէն Միխթար Գօշը ձեւակերպում է իւր որոշումը շատ առաձգական կերպով, «սղայոց պսակ մի որ իշխեսցէ զնեւ մինչեւ 'ի չափ հասեալ զհամայն իւրեանց ի մնացին» (I մաս, գլ. ԳԱ)։ Հակառակ դէպքում ամուսնացնող քահանային սահմանում է 100 դրամ տուգանք, նաեւ լուծումն հոգեւորական կողմից։ Այս յօդուածին, որ Միխթար Գօշը վերցրել է Ս. Բարսեղ Կեւտարացու ԾԺԸ կանոնից, շատ նման է նաեւ Դատաստանագրքի ձժԹ յօդուածը (I Թ.), որի սկզբում ասուածը. «կանոնական հրամանաւ սղայոց պսակ ոչ օրհնել մինչեւ 'ի գիտել զկային բնութեան», չմանապէս եթէ կնին լինի «անկատար», այսինքն ամուսնութեան համար անհասուն, իսկ այլը «կատարեալ» դա եւս համարուում է անվաւեր, իւր այդ առթիւ սահմանում են խիստ պատիժներ։

Մի այլ տեղ, այսինքն Նախագործութեան Է գլխում Միխթար Գօշը ասում է. «Ձի երեց ունց մանուկն 'ի խօսս լինի, եւ եօթն ամայս ասումն ուսանի եւ երեքաստան ամաց սերմանէ մանուկ», գտնուում է ամուսնութեան համար չափահաս, որովհետեւ այստեղ կայ ամուսնական կարողութեան, առնական յարակցութեան ընդունակութեան փաստ։ Թէ այդ որոշումը տղայի հասունացած տարիքին է վերաբերում պարզ երեւում է հետեւեալ խօսքերից. «իսկ հասակ որդեծնութեան (այսինքն 13 տարեկ.) հաւատարիմ լիցի 'ի տուրեւառութեան վաճառաց. զի թէ զանձն իւր եւ զսերմ վաճառել կնոջ եւ զկնն զնեւ յաւուսնութեան հաւատարիմ է, նշոյպէս հաւատարիմ լիցի 'ի տուր եւ առս վաճառաց» (Նախագոր. գլ. Ե)։ Եւ եթէ այստեղ տղայի համար ամուսնական չափահասութիւնը որոշում է 13 տարեկան, աղջկայ համար պէտք է լինէր մտաւորապէս 10—11—12 տարեկան։ Բայց եւ այնպէս Դատաստանագրքի մէջ մի ուրիշ տեղ գտնում ենք ակնարկ, որով հեղինակը կարծես ուզում է հակացնել, որ չափահասութեան համար սովորաբար կտրիճն 18 տարեկան, իսկ աղջիկը 15 տարեկան պէտք է լինի ամուսնութեան ատեն (I Թ., գլ. Ժ)։

Ամուսնական տարիքների օրինական չափահասութեան վերաբերեալ այդ իրար հակասող որոշումները ընդհանրապէս բղխում են հայկական իրաւունքի առանձնաշատեան բնութիւնից եւ մասնաւորապէս հետեւանք են Միխթար Գօշի կեանքի տակ եղած տարբեր գոյն կրող իրաւաբանական աղբիւրների։ Մի կողմից՝ տեսնում ենք սովորութեան իրաւունքը, որով տակաւին մինչեւ օրս էլ հայ ժողովրդի մէջ սովորական բան է համարուում 14—12 տարեկան տղայի եւ 13—10 տարեկան աղջկայ ամուսնութիւնը, իսկ միւս կողմից կանոնական իրաւունքի եւ հայրապետական կարգադրութիւնների ազդեցութիւնները, որոնք սովորաբար արգելում էին փոքահասակ ամուսնութիւններ, հիմնուելով այն սկզբունքի վրայ, որ ամուսնութեան ու ընտանեկան կեանքի մէջ մտնելու համար պահանջւում է ոչ միայն ֆիզիկական հասունութիւն ու զարգացում, այլ եւ մտաւոր-բարոյական։

Յամենայն դէպս, թւում է, որ Միխթար Գօշը հասունութեան հարցի անհրաժեշտ ու նպատակայարմար լուծումն վերապահել էր տեղական աշխարհագրական ու սոցիալական պայմաններին, մասնաւոր եթէ ի նկատի առնենք հայ ժողովրդի ցրուած ազգաբնակչութիւն եւ նրա երկրի տարբեր բնակչութիւն կրող գիրքն ու կլիման, որոնցից մեծ կախումն ունի մարդկանց ֆիզիկական զարգացումն։

Այնուհետեւ նշանակութիւն ունի ամուսնութեան համար փոխադարձ համաձայնութեան հայցը — consensus nuptialis. Նախ քան պատկուելը ապագայ ամուսինները իրար պէտք է տեսնեն, որպէս զի տարաձայնութիւններ չլինին եւ այնուհետեւ ըստ փոխադարձ հաւանութեան կարող են պատկուել (I Թ., գլ. ԳԱ). «Ն պատկուել առանց զմիտանս տեսանելոյ...»։ Նաեւ մի այլ տեղ՝ եւ կամք պատկել, «այսինքն փոխադարձ կամքով, Թէ եւ Միխթար Գօշը իւր Դատաստանագրքի մէջ ծնողների համաձայնութեան վերաբերմամբ ոչ մի առանձին որոշում չի կայացնում, բայց եւ այնպէս հայ եկեղեցական ժողովների որոշմանց ազդեցութեան ներքոյ, նա տեղ տեղ կողմնակի կերպով մոզնում է իւր Դատաստանագրքի մէջ եկեղեցական կանոններից սգտուելին, նաեւ սուրբ հայրերի կարծիքների համապատասխան՝ ամուսնացողների ծնողների կանխակալ համաձայնութեան անհրաժեշտութիւնն. «Ապա թէ երիցու ուրուք գաղա պսակ իցէ եղեալ առանց հօր եւ մօր աղջկանս...»

(I ժ., գլ. 92): Աւելորդ չի լինիլ այստեղ շեշտել, որ Միխիթար Գօշը չի որոշում պարզօրէն, թէ ամուսնացող կողմեր ինչ պայմաններում եւ ինչ ձեւով պէտք է փոխադարձ համաձայնութեան մասին իրենց հաւանութիւնը արտայայտեն: Մանաւանդ զաւանդարտեշտ էր իմանալ, երբ ի նկատի առնենք հայկական ընտանիքի կազմը, նահապետական սկզբունքը, ուր Տօր՝ ընտանիքի տանտիրոջ՝ իշխանութիւնը, նման հոգովական patria potestas-ին տարածուում էր բոլոր ստորագրեալ անդամների վրայ: Ուստի այսպիսի պայմաններում ընտանիքի Տօր կամքն էր որոշելու իւր զաւակների բախտը ապագայ ամուսնութեան նկատմամբ: Մինչդեռ Գաւառատանագիրքը չի պարզում, թէ ամուսնական հարցերում ընտանիքի Տօր իրաւունքը զաւակների կողմից սահմանափակուում էր, թէ ոչ:

Ամուսնութեան հետեւանքը որդեծնութիւն է: Ուստի պարզ է, որ շատ տեղերում օրէնսդրութիւնը, աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, ձգտում է նաեւ հոգ տանել ապագայ սերնդի ֆիզիկական և ուղղութեան մասին: Իսկ զա հնարաւոր է յաջողեցնել, երբ ծնողներն էլ ֆիզիկական և ուղղութեան առողջ են ու զերծ որեւէ ախտերից: Այդ հիման վրայ Գաւառատանագիրքը որոշ սահմանափակումներ է դնում ամուսնացողների նկատմամբ, եթէ սքա այնպիսի ֆիզիկական արատներ ունեն, որոնք կարող են ազդել նաեւ ապագայ սերնդի վրայ: Այդ արատները, որոնց մի աւ մի յիշում է Միխիթար Գօշը (I Մաս, գլ. 2Ը, 2Թ): Կարելի է երկու խմբի բաժանել.

ա. Ցրեւորիկ — Խոհեւ, ուրուկ, բորտա եւ ընդհանրապէս «ցաւագին ու ախտաժեւ», հիւսնութեանց տէր անձանց միանգամայն արգելում է պսակուիլ, «զի մի ախտն տարածեսցի եւ ի ծնունդն» (I Մաս, գլ. 2Թ):

բ. Յաւաբաւ անձերի ամուսնութիւնն դրուում է որոշ սահմանափակումների մէջ.

1. Կաշ, թէ կին եւ թէ այր, եթէ որեւէ «ուսման եւ կամ արուեստի կամ այլոց հարկաւորաց (մանաւորաց)» տէր լինելով, ընդունակ են անխափան վարել ամուսնական կեանքը, կարող են պսակուել:

2. Եւրո — արեւելիկ — աղէկը իրաւունք չունի ամուսնանալ, որովհետեւ նա անընդունակ կրթին մանուկ սնելու ու կրթելու եւ ընտանիքը կարգաւորել. կոյր տղամարդը, եթէ ժուժկալ է, կարող է պսակուիլ, որովհետեւ ամուսնու-

թեան այսպիսի դեպքում կինը կարող է ընտանիքն կառավարել ու հոգ տանել ընտանեկան կեանքի մասին:

3. Խաւ, թէ կին եւ թէ տղամարդ, եթէ իւրաքանչիւրը սրանցից ուշիւմ է եւ հաւանում են իրար, կարող են ամուսնանալ:

4. Հաւ, թէ կին եւ թէ այր, «ընդ առաւելս համարեալ», միանգամայն զրկուած են ամուսնութեան իրաւունքից:

Ի վերջոյ մնում է մեզ կանգ առնել մի այլ նշանաւոր հարցի վրայ, որ միշտ զանազան ժողովուրդների օրէնսդրութիւնների մէջ տարածաշրջանների առիթ է եղել ամուսնութեան օրինաւորութեան կամ ապօրինութեան մասին, այն է ազգակցական աստիճանների չհասութիւնը: Թեեւ իսկապէս այդ հարցը աւելի շուտով վերաբերում է կանոնական եւ ոչ թէ քաղաքացիական իրաւունքին, բայց եւ այնպէս, որպէս զի մեզ աւելի պարզ ու լրիւ պատկերացնել Միխիթար Գօշի հայեացքը ամուսնական իրաւունքի մասին, կարեւոր սեպեցնել զոնե համաօտօրէն տեսութեան առնել այդ հետաքրքիր հարցը:

Միխիթար Գօշը իւր Գաւառատանագրութեամբ, ինչպէս եւ միշտ, այս հարցումն էլ անորոշ ու մթին կերպով է արտայայտում: Գաւառատանագրի համաձայն ամուսնութիւնը միշտապէս ազգակցականների մէջ փնտսակար է համարուում. «բայց եթէ արեւն յարիւն ոչ տաս խառնիլ, որ միշտ եւ անուշ մերձաւորութեան սպասի» (I Մ., ձԸ), այսինքն ամուսնացողների միջեւ չլինի ազգակցութեան անուշ, եւ կամ «բայց մանաւանդ առաւելագոյն զգուշանալ յանձնալ ամուսնութենէ մերձաւորաց, որ ազգաւ մտաւորութիւն է եւ կործանին յայնքան չարիս» (անդ.), ըստ Գաւառատանագրի թէ խնամութեան եւ թէ արիւնակցութեան ճիւղագրութեան մէջ պահպանուում է միեւնոյն թիւն, չհասութեան աստիճաններն որոշելու համար: Խնամական չհասութեան աստիճանները արիւնակցականի հետ այդ տեսակ միացնելը Միխիթար Գօշը փաստաբանութեամբ է հետեւեալ կերպով. «Եւ թէ օրէնք եւ կանոնք զնսմալս ոչ յիշեն — յաղագս զմի ցուցանելոյ օրինակ նման այլոցն բաժանել ծննդաբ. զի զայս ասե օրէնքն՝ երկուս քորս ոչ առնուլ, եւ կանոնք զքորս կնոջ լընտանութիւն առնել փոխել ստն: Ուստի յայտ է՝ զի այսպէս ամենայն օրինականամբ լընտանութիւն փոխին եւ ըստ այլոց մերձաւորաց՝ ծննդաբ ցատանին: Եւ արդ՝ ըստ

օրինաց եւ կանոնաց այսպէս զուգին, **Թէ** եղբայրք ծնունդք իցեն եւ **Թէ** այլոց զի առաջին — ծնողքն 'ի **Թիւ** ոչ անկանին, զի վասն այն իսկ զարմ ասէ չորրորդ եւ կամ Տինգերորդ, (I Ծ., 41. ՃԹ):

Մխիթար Գօշի ճիւղագրութեան եղանակը հասկանալու համար անհրաժեշտ է ուշադրութեան առնել հետեւեալ կէտերը. «զի որպէս հրամայեցաւ յօրինացն չորրորդն առնուլ Տինգերորդին, զի յորժամ առցէ, մնացէ երրորդն, կամ «այսպէս ամենայն խնամութիւնս պնդելի լինցին, զի 'ի լինելն միայ երբքն կամ չորս, եւ վերջապէս «գերորդ **Թողով** 'ի միջոցին՝ չորրորդը հրամայէ առնուլ» (I Ծ., ՃԹ): Այս բոլոր դէպքերում չեն հաշուում ծնողները. «ծնողքն 'ի **Թիւ** ոչ անկանին, ուրեմն ըստ Մխիթար Գօշի երկու ամուսնացողների միջեւ պէտք է միայ առնալն 3 աստիճան եւ արդ՝ չ'միջին աստիճաններին յետեւող զարմը արդէն կը լինի չորրորդ զարմ, որ եւ կարող է ամուսնանալ Տինգերորդ զարմի հետ: Միեւնոյն յօգուածում Մխիթար Գօշն ակնարկում է, որ շատերն անտեղեկ լինելով չհասութեան վերաբերեալ կանոններին, պահանջում են, **Թէ** «որքան 'ի միողէ իցէ կողմանէ չորրորդն կամ Տինգերորդն զնոյն եւ 'ի միւսմէ պահանջեն 'ի կողմանէն»:

Ինչպէս տեսնում ենք, Մխիթար Գօշը ճիւղագրութիւնը հաշուելիս իւրաքանչիւր զարմը մի ծնունդ կամ աստիճան է համարում, փոքրամասն հոմանիշ հռովմեական ձեւին: Դա յացալայտ է նաեւ այն նախադասութիւնից, ուր նա չեշտում է, **Թէ** ամուսնական զուգման նկատմամբ իր սահմանած կանոնները խմբագրել է հետեւողութեամբ նախկին եկեղեցական կանոններին. «գիտութիւն է զի կանոնք հրամայի՝ մի ոք իշխեսցէ խնամութեան անոնք միջեւ 'ի չորրորդ եւ 'ի Տինգերորդ զարմ զնոյն իսկ զօրինացն ասէ, զի գերորդն ծնունդն զոր հրամայէ առնուլ եւ որ առնուլ լինի Տինգերորդ» (I Ծ., ՃԹ): Վերոյիշեալ օրինակներից պարզ է, Մխիթար Գօշն ընդունում է ամուսնութիւնն ազգացուծութեան 5-րդ աստիճանում:

Արդ դառնանք չհասութեան հարցին խորթ ազգականների վերաբերմամբ: Ահա **Թէ** ինչպէս է պարզաբանւում այդ հարցը Դատաստանագրքի մէջ, եթէ պատահի առնուլ կին, որն արդէն ունի իր օրտար կամ ուսար եւ եթէ պիտի ամուսնութիւնից յետոյ առաջանայ նոր ծնունդ, այն ժամանակ խորթ զաւակները (ա-

ռաջինի դուստրը եւ վերջին ծնունդը) իրաւունք չունեն ամուսնանալու: Եւ այսպէս հետագայ ծնունդները՝ այսինքն խորթ ազգականները **Թէ** առաջինի դուստրից (ուստրից) եւ **Թէ** օրմ մօր վերջին ամուսնութիւնից առաջ եկած սերունդը 3 աստիճան անկարող են իրար հետ ամուսնանալ. միմիայն սկսած չորրորդ աստիճանից հաս է համարւում ամուսնութիւնն (I Ծ., 41. ՃԸ): Իսկ խորթ ծնողներից առաջած հարազատ զաւակների ծնունդները ամուսնանալիս Դատաստանագրքի համաձայն ենթարկւում են հաս-չհասական վերը արժարժած ընդհանուր կանոններին, այն է 5-րդ աստիճանի հասութեան:

Այստեղ աւելորդ չի լինել չհասութեան մի հետաքրքիր օրինակ էլ յիշատակել, որ վերցուած է Թագեոս առաքեալին վերագրած կանոններից: Մի մօր կաթով սննուած, **Թէ** եւ իրարից օտար, անձինք (որոնցից մէկը 'ի հարկէ այդ մօր հարազատ զաւակն է) իրաւունք չունեն միմիանց հետ պսակուելու: Ուրեմն ըստ Մխիթար Գօշի այսպէս անուանած «կաթնեղջար ու քոյր»ը համարւում են հոգեւոր ազգականներ, որոնք ամուսնութեան հարցում ենթարկւում են նմանապէս չհասութեան ընդհանուր կանոններին (I Ծ., 41.):

Վերոյիշեալ բոլոր յօդուածները դիտելիս, աչքի է զարնում այն փաստը, որ Դատաստանագրքի շատ մեղմ է նայում չհասութեան հարցին, Թողտարելով ամուսնութիւնն 5-րդ աստիճանում: Մինչդեռ Ղերսէս Ընորհային, որ ժամանակակից էր Մխիթար Գօշի իւր «Ընդհանրականին», մէջ պահանջում է երկու կողմից չորս-չորս աստիճանների արգելումն, հետեւապէս այստեղ ամուսնութեան հասութիւնը օրինաւոր էր համարւում 10-րդ աստիճանում: Ղերսէս Ընորհային թերեւս հռովմեական եկեղեցական կանոնների ազդեցութեան ներքոյ էր գտնւում. իսկ Մխիթար Գօշի համար պէտք է ասել, որ նա ամուսնական հաս-չհասութեան հարցի նկատմամբ օգտուել է բացառապէս Շահապիվանի ու Պարտաւի ժողովների կանոններից: Եւ եթէ համեմատենք Դատաստանագրքի յօդուածները արիւնակցութեան չհասութեան վերաբերմամբ վերոյիշեալ ժողովների կանոնների հետ, նրանք մէջ մեծ նմանութիւն կը տեսնենք Շահապիվանի ժողովն ընդունւում է չհասութիւնն մինչեւ չորրորդ աստիճանը, այսինքն արգելւում է 3 աստիճան. «զայլ ոք յարգի անտի իւրում

մինչև 'ի չորրորդ ծնունդն իւր կին զօր մի իշխեսցէ առնել...» (Ժ. Գ. կան.)։ Պարտաւի ժողովի Ժ. Գ. կանոնը սահմանում է. «յայտ՝ յետէ 'ի ցլորրորդ զարմն մի իշխեսցեն ամուս. նութեամբ զուգել»։

(Հարաւ-իւր-իւն)

10. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ



ՀԱՅԵՐԵՆ ԵՈՐ ԲԱՐԵՐ ՏԵՄԲԵՐԱՅ ԿԻՐԱՅԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԻՐԱՅԻ

(Հարաւ-իւր-իւն)

31. ԵՄԷԼ

Այս անբ գոյութիւն ունի միայն «նշխիւ» աւանդին մէջ. «առ մեծագոյն մասհատութիւն հիմ. նացելոցն ի վերայ «նշխիւ» վիմին ուղղափառի հաւատոյ եւ առ պատկառութիւն նախասացելոց ազանդոցն»։ Տիմոթ. էջ 281։

Այս նշանակէ «անխախտել»։ Առաւ. Բառն ունի արդէն նշխիւ «խախտել» հետաքրքրական ձեւը։

32. Կ-Գ-Լ-Ե-Լ

Եւ ի վերայ միանանց ծովու ճեմեալ՝ ոտիցն ոչ գնացելոց, իսկ զիսհակացն այտմունս վերադառնալ մերկին կ-գ-լ-ե-լ, աներկբայապէս է Աստուծոյ (գործ)։ Տիմոթ. էջ 98։

Կ-գ-լ-ե-լ կը կապէ լծորդ եւ հոմանիշ ձեւ մը խաղաղութիւն բառին. ի եւ ի մայրենուն լծորդութեան համար կանգնաւ ուրիշ մի խումբ օրինակներ, որոնց վրայ պիտի խոսիմք ի մօտոյ առանձին յօդուածով։

33-36. Կ-Գ-Լ-Ե-Լ, Կ-Գ-Լ-Ե-Լ, Կ-Գ-Լ-Ե-Լ, Կ-Գ-Լ-Ե-Լ

Այս բոլոր կ'աւանդին կ-գ-լ-ե-լ, որոնք, կարողութիւն, արմատեն, ահա պսոնց վկայութիւնները։

1. «Առ կ-գ-լ-ե-լ բանիւք եւ զորոմք... այր բառ ճշմարտութեան խաղաղ եւ փրկանիշ գոյր

1. Հաշտակութիւն. Պարտաւի եւ մասամբ Գոթիկ ժողովների վերադարձ կանոնների տարբեր խմբագրութիւնների ընթերցման ու բնութագրման մասին տես մանրամասն.

1. Արիստակէս Եպս. Սեդրակեան՝ Ամուսնական խնդիրներ, 1891 թ., Թիֆլիզ. էր. 35-50.

2. Գաբրիէլ Առաքելեան - Ամուսնական տարակուսանքներ, 1894. Բագու. էր. 25-37.

3. Արեւն Արզա. Գլանեան - Ամուսնութիւն եւ ամուսնալուծութիւն 1904. Ալեքսանդրապոլ. էրես 25-29.

4. Արեւն Արզա. Բառասանեան - Ամուսնութիւն՝ «Փորձ», 1880. Նոյեմբեր Գեղեթմբեր. Թիֆլիզ.

5. Մեղի-Քաղաքեան - Հայոց եկեղեցական իրաւունքը. 1903. Եւր. թ.

Խարայեղի, Տիմոթ. էջ 234։ Ասիկա կ'անարիւկէ Ղուկ. Խ. 19 «այր մարգարէ, հօր արդեամբք եւ բանիւք առաջի Աստուծոյ, եւն հաստուածը։

4. «Եւր-ը կը նշանակէ «ուժեղ, զորաւոր»։

2. «Եւր-ը կ'աւանդուի զանազան գաւառներն եւ բնակչագոյնք առ վան Քրիստոսի պատկառման եւ ուժեղագոյնք»։ Տիմոթ. էջ 25(1).

4. «Եւր-ը կ'աւանդուի «անելի ուժեղ, հօր»։

3. «Եւր-ը կ'աւանդուի հօր, փախեան զերեանս արդ, կ-գ-լ-ե-լ ի տկարութենէ զի յոր-ժամ տկարանային ի հայածմունս, յայնժամ կարողութեան զանազան գաւառներն»։ Տիմոթ. էջ 250.

4. «Եւր-ը կ'աւանդուի «ուժ առնել, զորանալ»։

4. «Խաչեցեալ ահա ի տկարութենէ, իսկ կեցեալ է կ-գ-լ-ե-լ առտուածայնայն»։ Տիմոթ. էջ 258 (հմտ. Բ. Կոր. Ժ. 4. 4. զի թէպէս եւ խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, այլ կենդանի է զորութեամբն Աստուծոյ)։

«Բանդի ոչ մարդոյ հնազանդին երկնային պետութիւնք եւ իշխանութիւնք եւ կ-գ-լ-ե-լ, այլ Աստուծոյ»։ Տիմոթ. էջ 268.

«Հոգին Աստուծոյ վերեկեցեալ առ քեզ եւ կ-գ-լ-ե-լ Բարձրագոյն հոգեւորացի քեզ»։ Տիմոթ. էջ 269 եւ 292. (հմտ. Ղուկ. Ա. 35. Հոգի սուրբ եկեցեալ ի քեզ եւ զգ-լ-ե-լ Բարձրագոյն հոգեւոր լիցի ի վերայ ք)։

Արիւշ վկայութիւններ տես էջ 235, 236, 237, 250, 324 եւն։ Ասոցմէ պարզ է որ կ-գ-լ-ե-լ «զորութիւն»։

37. ԿԵՆԱՆ

Թագաւոր երկրիս յուժն առնուն զհարկս կամ շինեալ, յորոցն իւրեանց, եթէ յօտարաց։ Տիմոթ. էջ 289.

Հատուածս առնուած է Ա. Գրեկն (Մատթ. Ժ. 24), որ խօսեալուստից թարգմանութեան մէջ հետեւեալ ձեւն ունի. «Թագաւորք ազգաց յուժն առնուն զհարկս կամ զհաւ, յորոցն իւրեանց թէ յօտարաց, Եւնարեն բնագիրը նոյն տեղը համաձայն Տիմոթեոսի՝ այսպէս կ'ըսէ. «οἱ βασιλῆαι τῆς γῆς ἀπὸ τῶν ἡγεμονῶν αἰσθάνονται τὴν γῆν καὶ τὸν ἀνθρώπον καὶ τὸν κτήνη»։ Ասոց համեմատութենէ կ'տեսնուի որ կ-գ-լ-ե-լ յո. խոսքն ձեւէն փոխառեալ է՝ «հաւ, հարկ, տուրք» նշանակութեամբ (ուղղականը խոսքն, լատ. census)։

38. Հ-Գ-Լ-Ե-Լ

Այս բանք զանազանութիւնք ի մարմնի՝ ձեւոցն մեծութեանցն, արականութեանցն, զորութեանցն, (պարտաւի «զորութեանցն»), կարողութեանցն, յարմարանցն՝ ինչպէս եւ երակեւ եւ միս եւ ոսկերք եւ միջն եւ շաւիղ-պարտաւի եւ յօդք եւ խաղանք, եւ որքան այլք սոցին յորոք ճշգրտաբանն մանկութեւն թշխանք։ Տիմոթ. էջ 324.

Այս գոյութիւնն Ոսկերքեանն առնուած հատուածին մէջ, որուն Ոսկերքեանն թարգմանութիւնք հետեւեալն է. «Այս ապաքէն իսկ բնիս որոշմանն եւն ի մարմնի, ձեւոց, մեծութեանց, զորութեանց»։